ԿԱՐԾԻՔ

ԴԻԱՆԱ ՍՊԱՐՏԱԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ «ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02. - «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ժամանակակից համաշխարհային տնտեսությունը կրում է խորքային փոփոխություններ, ընդ որում, եթե 1970-ական թթ. մրցակցությունն առանձին տարածաշրջաններում և երկրներում առանձնապես չէր արտահայտվում, ապա այսօր մրցակցության աճն ու զարգացումը դուրս են եկել «ազգային սահմաններից» և ազգային տնտեսության մրցունակության խնդրի թերագնահատումը կարող է «թանկ նստել» ցանկացած երկրի կամ ընկերության վրա:

Սակայն գլոբալացումը և մրցակցության զարգացումը ստեղծում են ոչ միայն խնդիրներ, այլ նաև՝ հնարավորություններ ապրանքարտադրողների համար: Մասնավորապես՝ մշտական նորարարությունը, առավել մրցունակ ճյուղերի և հատվածների աննախադեպ աճը զարգացած և նոր ինդուստրիալ երկրներում պայմանավորված են ներքին և միջազգային մրցունակությամբ: Մրցունակության համեմատական գնահատականները թույլ են տալիս որոշել համաշխարհային տնտեսությունում ազգային տնտեսվարողների թույլ և ուժեղ կողմերը, ճշգրտել տնտեսական զարգացման ուղենիշները:

Մրցունակությունը բազմաբնույթ և բազմաբովանդակ, բարդ կատեգորիա է, որն օրգանապես բնորոշ է տնտեսավարման շուկայական համակարգին: Այդ կատեգորիայի բովանդակության մասին համարժեք պատկերացումները կանխորոշվում են նրանով, թե նշված հասկացության քանակական և որակական բնութագրերը ստանալու համար ցուցանիշների ու չափանիշների ինչ հավաքածու է օգտագործվում:

Ազգային մրցունակության ժամանակակից սահմանումները, որոնք ընդունվել են մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից, ըստ էության, արտացոլում են մրցակցային առավելության հասկացության էվոլյուցիայի որակապես նոր փուլը:

Բարեկեցությունը մեծապես բխում է մրցունակության մակարդակից, որը հիմնված է արտադրողականության և ինստիտուտների կատարողականի վրա:

Թեև Հայաստանի տնտեսությունն անկախությունից ի վեր բավական փոփոխություններ է կրել, այն ներկայումս կանգնած է հիմնովին վերափոխման սոցիալ-տնտեսական բարդ

մարտահրավերների առջև: Վերջին տարիներին տնտեսության քանակական և որակական զարգացումն անկայուն է եղել, ինչը վկայում է զարգացման նախկին մոդելի սպառման և տնտեսական նոր ու արմատական մոդելի անհրաժեշտության մասին: Հայաստանը կանգնած է տնտեսության հիմնովին վերափոխման հրամայականի առջև, որի համար Հայաստանը պետք է մշակի նոր տնտեսական մոդել[1]:

Վերը նշվածով է պայմանավորված հետազոտության համար ընտրված թեմայի արդիականությունը:

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ամրագրված են այն հիմնական գիտական արդյունքները և դրանց գիտական նորույթը, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, բնութագրված են տեսական և մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության առաջին՝ «Երկրի տնտեսության մրցունակության տեսական և մեթոդաբանական հիմքերը» գլխում ներկայացվել են երկրի տնտեսության մրցունակության էությունը և գործոնները, ինչպես նաև երկրի տնտեսության մրցունակության գնահատման մեթոդաբանական հիմնահարցերը:

Հեղինակն աշխատանքի այս մասում, անդրադառնալով մրցունակության բովանդակությանը, արձանագրում է, որ «մրցունակություն» հասկացությունը սերտորեն առնչվում է մրցակցային հարաբերություններին: Պետք է նկատել, որ միայն մրցակցության արդյունքում են բացահայտվում երկրի տնտեսության, նրա առանձին ոլորտների, կազմակերպությունների և արտադրատեսակների մրցակցային առավելությունները, որոնք էլ կազմում են մրցունակության հիմքը:

Երկրի տնտեսության մրցունակությունը բնութագրվում է ինստիտուտների, ենթակառուցվածքների, պետական և մասնավոր հատվածների գործունեության արդյունավետութ-

[1] Հայաստանի ազգային մրցունակության զեկույց 2017, Մեր դերը Չորրորդ արդյունաբերական հեղափոխության մեջ, Ի- Վի Քոնսալթինգ, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, 2017, էջ 6:

յամբ և դրանց միջև կայուն օպտիմալ փոխհարաբերություններով, ինչը պայմանավորում է սահմանափակ ռեսուրսների առավել ռացիոնալ օգտագործումը՝ հանգեցնելով միջազգային չափանիշներով մրցունակ ապրանքների ու ծառայությունների արտադրությանն ու համաշխարհային շուկայում դրանց իրացման առավել բարենպաստ պայմանների ապահովմանը:

Հեղինակն առաջադրում է այն դրույթը, որ երկարաժամկետում տնտեսությունում մրցունակության բարձր դիրք գրավելու համար շեշտը պետք է դնել տնտեսական քաղաքականության ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետության բարձրացման վրա: Հաշվի առնելով այն փաստը, որ երկարաժամկետում ավելի մեծ կարևորություն է ստանում տնտեսական կայունությունը, այս մոտեցումն ավելի արդյունավետ է, քանի որ թույլ է տալիս տնտեսությանը դինամիկ գնահատական տալ:

Ատենախոսի հավաստմամբ՝ ներկայումս տնտեսության մրցունակության մակարդակը ներքին և արտաքին շուկաներում առողջ մրցակցության արդյունք է, որն էլ, բնականաբար, հանգեցնում է արտադրողականության մեծացմանը: Շուկայական տնտեսության արդյունավետության բարձրացման գլխավոր գործոններից է պահանջարկը, որը պայմանավորում է տնտեսվարողների կողմնորոշվածությունը դեպի գնորդները: Այս պայմաններում սուր մրցակցություն է ծավալվում արտադրողների միջև, ինչի հետևանքով խթանվում է գիտատեխնիկական առաջընթացը, և որոշ ընկերություններ ստանում են մրցակցային առավելություններ:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ տնտեսության մրցունակության արդի վիճակի և մակրոտնտեսական հիմնախնդիրների վերլուծություն», գլխում հետազոտվել են ՀՀ տնտեսության մրցունակության վիճակի փոփոխությունները, ինչպես նաև վերլուծվել են ՀՀ տնտեսության մրցունակությունը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները:

Հեղինակը դիտարկում է, որ ՀՀ շուկայական տնտեսության ցածր արդյունավետությունը հետևանք է ոչ մեծ թվով ֆիրմաների գերիշխանության և առևտրի ու ներդրումների իրականացման համար լուրջ խոչընդոտների առկայության: Ավելին, պետության միջամտությունը սահմանափակում է մրցակցությունը և արգելակում ձեռնարկատիրական գործունեությունը: Բացի այդ, հարկային համակարգը աղավաղում է մրցակցությունը և խոչընդոտում ներդրումները:

ՀՀ արտադրողականության բարձրացման գործում էական նշանակություն է ձեռք բերում օտարերկրյա ընկերությունների մուտքը ներքին շուկա. դա տեղական արտադրողներին ստիպում է մրցակցել համաշխարհային առաջատարների հետ՝ համանուն արտադրատեսակների գծով: Այդպիսի համագործակցության իրացման երկու կարևոր ուղի կա. առևտուր և օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսք դեպի երկրի տնտեսություն:

Նկատի առնելով, որ ՀՀ տնտեսության ենթակառուցվածքների զարգացման ցածր մակարդակը խոչընդոտում է ձեռնարկատիրական գործունեության ընդլայնումը, կլաստերների զարգացումը տարածաշրջաններում բարենպաստ ազդեցություն կունենա տնտեսության վրա՝ բազմազանեցնելով այն:

Մրցունակության ապահովման առավել արդյունավետ ձևը նորարարական կլաստերներն են պետական և մասնավոր հետազոտական կենտրոնների մասնակցությամբ, այդ թվում՝ բուհերի, պետական և տեղական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և այլն: Այդպիսի կլաստերները հնարավորություն կընձեռեն առավել արդյունավետ օգտագործելու գիտական հետազոտությունների արդյունքները, միաժամանակ կօժանդակեն մարզային իշխանությունների և գործարարների սերտ համագործակցությանը:

Ընդհանուր առմամբ, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ թեև, ըստ տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշների ՀՀ-ում վերջին տարիներին գրանցվել է առաջընթաց, սակայն դա բավարար չէ տնտեսության մրցունակության ցանկալի մակարդակ ապահովելու համար:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման ուղիները» գլխում գնահատվել է տնտեսության մրցունակության և տնտեսական աճի միջև կապը, մշակվել է տնտեսության մրցունակության նոր մոդել և նախանշվել ՀՀ-ում վերջինիս կիրառման առավել կարևոր խնդիրները, ինչպես նաև ուսումնասիրվել է տնտեսության մրցունակության բարձրացման համաշխարհային փորձը և դրա կիրառման հնարավորությունները մեր հանրապետությունում:

Ատենախոսի կատարած վերլուծությունից պարզ է դառնում, որ, անկախ եկամտի խմբից, ՀՆԱ աճի հարաբերությունը համաշխարհային մրցունակության համաթվին ավելի հաճախ է նկատվում, քան՝ հակառակը: Այս համատեքստում՝ փորձ է կատարվել պարզելու, թե արդյոք տնտեսական աճը ազդում է համաշխարհային մրցունակության համաթվի (ՀՄՀ) դիրքավորման վրա: Պատճառային վերլուծության արդյունքներից պարզ է դարձել, որ բոլոր խմբերը միարմատ չեն: Բացահայտվել է այն փաստը, որ ՀՄՀ-ի և տնտեսական աճի միջև կապը բավական հաստատուն է: ՀՄՀ-ի և ՀՆԱ աճի տեմպի միջև փոխադարձ կապը գնահատվել է առանձին երկրների մակարդակով: Գնահատումների արդյունքները վկայում են, որ տնտեսական աճը ազդում է համաշխարհային մրցունակության վրա 70% -ով:

Ըստ հեղինակի՝ ՀՄՀ-ն կարող է կանխատեսել ազգային տնտեսության աճի շարժընթացը՝ հատկապես եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների համար: Սա կապված է այս երկրներում մեծ թվով տնտեսական բարեփոխումների հետ: Բարձր եկամուտ ունեցող երկր-

ների շարքում ՀՄՀ-ի և ՀՆԱ աճի միջև պատճառահետևանքային կապը գոյություն ունի միայն հզոր տնտեսություն ունեցող երկրների դեպքում:

Կատարվել է նաև ռեգրեսիոն վերլուծություն, որի միջոցով փորձ է արվել բացահայտելու ԱՏՄ համաթվի և ՀՆԱ աճի տեմպի փոխառնչությունը: Ինչպես վկայում են վերլուծության արդյունքները, ԱՏՄ միավոր փոփոխությունը հանգեցնում է ՀՆԱ աճի տեմպի մեկ տոկոս փոփոխության:

Այսպիսով՝ տնտեսության մրցունակության բարձրացման զարգացած երկրների փորձը հիմնված է սեփական տնտեսության մրցակցային առավելությունների առավել լիարժեք իրացման և թերությունների հնարավոր շտկման սկզբունքի վրա: Յուրաքանչյուր երկիր մշակում և իրականացնում է այնպիսի ռազմավարություն, որն առավելագույնս է համապատասխանում իր տնտեսական զարգացման օբյեկտիվ պահանջներին և համաշխարհային տնտեսության հնարավորություններին ու մարտահրավերներին:

Եզրակացություններում և առաջարկություններում հիմնականում ամփոփվել են և հակիրճ ձևակերպվել հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առավել առարկայական առաջարկները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ հիմնավորվածություն և հավաստիություն:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ տնտեսության մրցունակության բարձրացման միջազգային առաջավոր փորձի քննական վերլուծության արդյունքում բացահայտվել են դրա հիմնարար դրույթներն ու հստակեցվել ՀՀ-ում վերջինների կիրառման հնարավորությունները, իրականացվել է ՀՀ տնտեսության մրցունակության գործոնների վերլուծություն, ինչպես նաև մշակվել են ՀՀ տնտեսության մրցունակության գնահատման մոդել և բանաձև, որտեղ որպես հիմնական հենասյուներ դիտարկվել են տնտեսական արդյունավետությունը, տեխնոլոգիական զարգացածությունը, մարդկային ռեսուրսները, կառավարման ու արտադրության արդյունավետությունը:

Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից հետազոտության արդյունքները ընձեռում են լայն հնարավորություն կողմնորոշվելու անցման փուլում գտնվող երկրներում

տնտեսության մրցունակության բարելավման քաղաքականության իրականացմանն ուղղված հիմնախնդիրների լուծման հարցում:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրներն ուսումնասիրող ծրագրերի իրատեսականությանը, մրցակցային հարաբերությունների ու առավելությունների գնահատմանը նվիրված ուսումնասիրությունների և գործնական մշակումների ժամանակ:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ և առաջարկություններ,*** որոնք գրախոսվող աշխատանքի թեմայով ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները:

1. Ատենախոսության առաջին գիտական նորույթը վիճարկելի է այն իմաստով, որ, նախ, ինստիտուտներն արդեն իսկ համարվում են Համաշխարհային տնտեսական համաժողովի մշակած համաթվի առաջին հենասյունը: Երկրորդ հերթին, նման սահմանում տալու համար հեղինակը պետք է իր տեսակետը հիմնավորեր համապատասխան հաշվարկներով և գնահատականներով՝ դրանով իսկ ապացուցելով տվյալ սահմանման, ասպես կոչված, «ապրելու իրավունքը»:

2. Հետազոտության 2.1. ենթագլխում հեղինակը բավականին հանգամանալից հետազոտում է << տնտեսության մրցունակությունը բնորոշող հենասյուներն ու դրանց տարրերը՝ փորձելով բացահայտել առավել ծանրակշիռ խոչընդոտները: Գնահատելով ատենախոսի կատարած վերլուծությունը, այդուհանդերձ, աշխատանքն ավելի կշահեր, եթե ներկայացվեին արձանագրված խոչընդոտների վերացմանն ուղղված ռազմավարական մոտեցումները, ինչպես նաև վերջիններիս կենսագործման համար անհրաժեշտ կառուցակարգերն ու անհրաժեշտ ռեսուրսների աղբյուրները:

3. Ատենախոսության 2.1. ենթագլխում հեղինակը որպես մրցունակության բարելավմանը խոչընդոտող գործոններ նշում է պետության գերիշխող դիրքը տնտեսության մեջ, ինչպես նաև հարկային համակարգը և հարկային մեծ բեռը: Կարծում ենք, հեղինակի մեկնաբանությունները տեղին չեն, առավել ևս, չեն հիմնավորվում (և չեն էլ կարող հիմնավորվել) համապատասխան տվյալներով և համեմատական վերլուծություններով: Այլ կլիներ խնդիրը, եթե ատենախոսը ներկայացներ հարկային և մաքսային վարչարարության հետ կապված հարցերը:

4. Աշխատանքի 2.2. ենթագլխում տվյալների ժամանակագրությունը սահմանափակվում է 2017 թվականով, այնինչ, առավել թարմ տվյալները (այդ թվում՝ 2019թ.) տևական ժամանակ է, որ հասանելի են:

5. Ատենախոսության 3.1. ենթագլխում հեղինակը գնահատել է համաշխարհային մրցունակության համաթվի և ՀՆԱ-ի միջև պատճառահետևանքային կապն ըստ երկրների խմբերի:

Անկախ հետազոտության արդյունքներից, կարծում ենք, որ միագործոն կախվածությամբ գնահատականներն էապես չեն բնութագրում ուսումնասիրվող երևույթի (տվյալ դեպքում՝ մրցունակության) բարելավման գործոնային վարքագիծը: Խնդիրն այն է, որ մրցունակության համաթիվը, բաղկացած լինելով 12 հենասյուներից և ավելի քան 100 ենթագործոններից, չի կարող ՀՆԱ-ի փոփոխությամբ ստացված կախվածության միջոցով համապարփակ գնահատվել:

6. Հետազոտական նյութի շարադրման տրամաբանական շարունակականության, ինչպես նաև կառուցվածքային իմաստով, հիմնավոր չէ մրցունակության բարձրացման համաշխարհային փորձի ներկայացումը ատենախոսության 3.3. ենթագլխում: Իրականությունն այն է, որ հեղինակի կողմից համաշխարհային փորձի ուսումնասիրությունը պետք է հիմքեր ստեղծեր այդ փորձի առավել նպատակահարմար տարրերը ՀՀ համապատասխան ռազմավարությունում ընդգրկելու համար, ինչպես նաև գնահատվեր այդ տարրերի ներդրման ազդեցությունը: Հավելենք նաև, որ հեղինակն այդ փորձի հիման վրա ներկայացնում է մոտ մեկ էջ ծավալով ընդհանուր բնույթի առաջարկներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա, այլ հետապնդում են Հայաստանի Հանրապետության տնտեսության մրցունակության բարձրացմանը և մակրոտնտեսական կայունության բարելավմանը նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Դ.Գևորգյանի թեկնածուական ատենախոսությունն ունի ընդգծված գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական բավարար մակարդակ, ինչի մասին են վկայում ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատան-

քում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետությունում մրցունակության քաղաքականության կատարելագործման, մասնավորապես՝ մրցակցային առավելությունների կենսագործման հիմնախնդիրների լուծման ուղղությամբ որակապես նոր մոտեցումների ներդրման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Դիանա Սպարտակի Գևորգյանի «ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման մակրոտնտեսական հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է Ը.00.02. - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
ՀՊՏՀ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՏՆՕՐԵՆ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ՝ **Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆ**

ՊԱՐՈՆ Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՊՏՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ն.ԴԱՐԲԻՆՅԱՆ**
20.07.2020թ.